ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԲԴԽ-37-Ո-87
2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 38-րդ հոդվածի 10-րդ մասով, 89-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով և 94-րդ հոդվածի 1-ին մասով՝ Բարձրագույն դատական խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Դատական դեպարտամենտի բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով «Դատական իշխանության գործունեության ապահովում և իրականացում» 1080 ծրագրի «Բարձրագույն դատական խորհրդի և ՀՀ դատարանների պահուստային ֆոնդի ձևավորում և կառավարում» 11018 միջոցառումից նույն ծրագրի «Բարձրագույն դատական խորհրդի բնականոն գործունեության ապահովում և Բարձրագույն դատական խորհրդի կողմից դատական իշխանության անկախության երաշխավորմանն ուղղված միջոցառումների իրականացում» 11001 միջոցառմանը հատկացնել **7 597 840 (յոթ միլիոն հինգ հարյուր իննսունյոթ հազար ութ հարյուր քառասուն) ՀՀ դրամ՝** բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Վարչական սարքավորումներ» 512200 հոդվածով, այդ թվում՝

1) Դատական դեպարտամենտի և «ՋԻ ՎԻ ԷՆ» ՍՊԸ-ի միջև 17.05.2019թ. կնքված պետության կարիքների համար տեսանկարահանման սարքերի մատակարարման թիվ «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/10-2» ծածկագրով պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման համար վճարում կատարելու նպատակով՝ **3 774 000 (երեք միլիոն յոթ հարյուր յոթանասունչորս հազար)** ՀՀ դրամ,

2) Դատական դեպարտամենտի և «Շուշան տեխնիկս» ՍՊԸ-ի միջև 17.05.2019թ. կնքված պետության կարիքների համար տեսանկարահանման սարքերի մատակարարման թիվ «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/10-3» ծածկագրով պայմանագրով

նախատեսված ապրանքների մատակարարման համար վճարում կատարելու նպատակով՝ **430 000 (չորս հարյուր երեսուն հազար)** ՀՀ դրամ,

3) Դատական դեպարտամենտի և «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ի միջև 17.05.2019թ. կնքված պետության կարիքների համար տեսանկարահանման սարքերի մատակարարման թիվ «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/10-1» ծածկագրով պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման համար վճարում կատարելու նպատակով՝ **3 393 840 (երեք միլիոն երեք հարյուր իննսուներեք հազար ութ հարյուր քառասուն)** ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Գ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

2019թ. մայիսի 30
ք. Երևան